

«Վերականգնողական ստոմատոլոգիա»

2023թ.-ից (կրկնողաբար) Երևան քաղաքում ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից կանցկացվի «Վերականգնողական ստոմատոլոգիա» թեմայով 2-շաբաթյա դասընթացը: Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով: Թիրախային լսարանը՝ ընդհանուր (ընտանեկան) ստոմատոլոգներ, օրթոպեդ-ստոմատոլոգներ, թերապևտ-ստոմատոլոգներ: Մասնակիցներին կշնորհվի ՇՄՁ 21 տեսական և 19 գործնական կրեդիտ: Լրացուցիչ տեղեկատվության համար կարող եք զանգահարել 091340184 հեռախոսահամարով:

ԾՐԱԳԻՐ

«ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱ» ԹԵՄԱՅՈՎ 2-ՇԱԲԱԹՅԱ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2023թ.-ից (կրկնողաբար) ք. Երևան (ՀՀ ԱՆ ԱԱԻ «Ստոմատոլոգիայի» ամբիոն)

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ»

Շաբաթ 1		
Օր 1		
10:00-12:00	Դասախոսություն Արհեստական շապիկների դասակարգում: Ատամների հղկման առանձնահատկությունները: Մետաղ-կերամիկական, կերամիկական շապիկներ: Հղկման և ֆիքսացիայի առանձնահատկությունները, կլինիկա-լաբորատոր փուլերը	Գայանե Նարիմանյան
12:00-14:00	Գործնական աշխատանք Կլինիկական աշխատանք անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ: Կատարել ֆանտոմ ատամների պսակային հատվածների հղկում ժամակակակից եղանակներով	Գայանե Նարիմանյան
Օր 2		
10:00-12:00	Դասախոսություն Ֆրոնտալ ատամների ադգեզիվ վերականգնում: Ներդիրներ, վինիրներ, ծայրատային գամիկավոր կոնստրուկցիաներ փուլերի քննարկում	Մեսրոպ Մեսրոպյան
12:00-14:00	Գործնական աշխատանք Կլինիկական աշխատանք անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ: Կատարել ֆանտոմ ատամների արմատախողովակների մշակում և պատրաստում	Մեսրոպ Մեսրոպյան

	<p>գամիկներով ատամնաշապիկների համար ֆանտոմ ատամների պսակային հատվածների հղկում ժամակակալից եղանակներով միկրոպրոթեզների պատրաստման համար:</p> <p>Ռեֆրակտորներ (լյումիներներ, ուլտրանիրների) կիրառման քննարկում CAD/CAM2 տեխնոլոգիայով պսակների ներդիրների գամիկների վինիրների պատրաստման փուլերի քննարկում</p>	
Օր 3		
10:00-12:00	<p>Դասախոսություն</p> <p>Կարիեսային ախտահարումներ ախտորոշման, բուժման ժամանակակալից սկզբունքները, ախտորոշման և բուժման սխալները և բարդությունները</p>	Մարինա Դանիելյան
12:00-13:00	<p>Գործնական աշխատանք</p> <p>Ատամների վերականգնումը ժամանակակալից պլոմբանյութերով: Կարիոզ խոռոչի հղկման առանձնահատկությունները կապված վերականգնման տեսակի հետ: Ֆանտոմ ատամների վրա, անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ, կատարել կարծր հյուսվածքների մշակում, խոռոչների ձևավորում կապված վերականգնման տեսակի հետ: Կարիոզ խոռոչի ձևավորում ըստ դասերի (C ֆակտոր): Քննարկել կարիոզ խոռոչում դեղորայքային մշակման ժամանակակալից նյութերը (Consepsis): Քննարկել և ցուցադրել ադիեզիվ ձևավորման առանձնահատկությունները: Ցուցադրել էսթետիկ վերականգնման համար նախատեսված գջիրների և աբրազիվ գործիքների հավաքածուն և դրանց օգտագործման տեխնիկան էսթետիկ վերականգնման յուրաքանչյուր փուլում: Ռետենցիոն սարքերի պարապուլպար պինների օգտագործման առանձնահատկությունների քննարկում էսթետիկ պլոմբավորման ժամանակ (Պինների ֆիքսացիա): Էսթետիկ պլոմբավորման ժամանակ Masking Agent –ի, 3M ESPF-ի օգտագործման եղանակների, ռեստավրացիոն համակարգի, 3M ESPF-ի նյութերի և դրանց կիրառման ոլորտի քննարկումը: Ատամների կարիոզ խոռոչների վերականգնման սենդվիչ-տեխնիկայի (փակ և բաց սենդվիչ) կիրառման ցուցումների և փուլերի քննարկում:</p>	Մարինա Դանիելյան
Օր 4		
10:00-12:00	<p>Դասախոսություն</p> <p>Միջդիսցիպլինար համագործակցություն: Կողմնային կտրիչների ադենտիա</p>	Հայկ Սարգսյան
12:00-14:00	<p>Գործնական աշխատանք</p> <p>Միջդիսցիպլինար համագործակցություն: Ուղղահայաց հարթության մեջ տեղի վերականգնում օրթոդոնտիկ ճանապարհով</p>	Հայկ Սարգսյան
Օր 5		
10:00-12:00	<p>Դասախոսություն</p>	Անահիտ Մկրտչյան

	Կարիեսային ախտահարումներ: Ախտորոշում, բուժման ժամանակակից սկզբունքներ, ախտորոշման և բուժման սխալներն ու բարդությունները մանկական ստոմատոլոգիայում	
12:00-14:00	Գործնական աշխատանք Քննարկել կարիոգ խոռոչի հղկման առանձնահատկությունները երեխաների մոտ, պլոմբանյութի ընտրությունը: ART-եղանակի կիրառումը մանկական ստոմատոլոգիայում: Ապակե իոնոմերային ցեմենտների և կոմպոնետների օգտագործման ցուցումների քննարկում մանկական ստոմատոլոգիայում:	Անահիտ Մկրտչյան
Շաբաթ 2		
Օր 1		
10:00-12:00	Դասախոսություն Մասնակի անատամության դասակարգումը: Մասնակի թիթեղային պրոթեզներ: Պրոթեզների ժամանակակից տեսակները, կլինիկա-լաբորատոր փուլերը: Աղեղային պրոթեզավորում, դիզայն, ֆիքսացիայի տեսակները, կլինիկա-լաբորատոր փուլերը	Գայանե Նարիմանյան
12:00-14:00	Գործնական աշխատանք Կլինիկական աշխատանք անմիջական պատասխանատու դասախոսի հսկողությամբ: Կատարել ֆանտոմ ատամների պսակային հատվածների հղկում ժամակակից եղանակներով: Մասնակի շարժական պրոթեզների ժամանակակից ձևերի (նեյլոնային, ակրիլային, Acry Free, կվադրոտի, սենդվիչ-պրոթեզների) կիրառման ցուցումների, հակացուցումների, առավելությունների և թերությունների քննարկում	Գայանե Նարիմանյան
Օր 2		
10:00-12:00	Դասախոսություն Լրիվ անատամություն: Լրիվ շարժական պրոթեզների պատրաստումը 5 այցով: Կլինիկա-լաբորատոր փուլերը	Գայանե Նարիմանյան
12:00-14:00	Դասախոսություն Պատասխանատու դասախոսի անմիջական հսկողությամբ ստանալ ֆունկցիոնալ դրոշմներ անատամ ծնոտների պրոթեզավորման համար: Ակրիլային պրոթեզների կիրառման ցուցումների, հակացուցումների քննարկում, կլինիկական դեպքերի վերլուծություն	Գայանե Նարիմանյան
Օր 3		
10:00-12:00	Դասախոսություն Կամրջաձև պրոթեզներ, հղկման առանձնահատկությունները: Ցուցումներ և հակացուցումներ	Գայանե Նարիմանյան

12:00-13:00	Գործնական աշխատանք Կամրջաձև պրոթեզների հենակետային ատամների ընտրությունը և հղկման սկզբունքները: Կլինիկական դեպքերի քննարկում թեմայի վերաբերյալ	Գայանե Նարիմանյան
Օր 4		
10:00-12:00	Դասախոսություն Բերանի խոռոչի վիրաբուժություն: Օստեոպլաստիկա, ալվեոլոպլաստիկա, ֆրենէկտոմիա	Արսեն Մանուկյան
12:00-13:00	Դասախոսություն Ատամների ախտաբանական մաշվածություն. դասակարգումը, բուժման մեթոդները: Ատամների շինավորում	Գայանե Նարիմանյան
13:00-14:00	Գործնական աշխատանք Սլայդների օգնությամբ տարբեր կլինիկական դեպքերի և բուժման եղանակների քննարկում	Գայանե Նարիմանյան
Օր 5		
10:00-12:00	Դասախոսություն Ստոմատոլոգիայում կիրառվող դեղամիջոցները: Ասեպտիկական և անտիսեպտիկական ստոմատոլոգիայում	Մեսրոպ Մեսրոպյան
12:00-14:00	Գործնական աշխատանք Իրագեկել ստոմատոլոգիական բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին անձնական, անհատական և աշխատանքային հիգիենայի կանոնների պահպանման և պանաջների վերաբերյալ՝ համաձայն ՀՀ-ում գործող համապատասխան օրենքների: Ներկայացնել ախտահանման ժամանակակից սարքավորումները, եղանակները և նյութերը	Մեսրոպ Մեսրոպյան

Թիրախային լսարան՝ ընդհանուր (ընտանեկան) ստոմատոլոգներ, օրթոպեդ-ստոմատոլոգներ, թերապևտ-ստոմատոլոգներ:

Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-30 հոգի: